ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/3-Ա-1

ք. Երևան «18» Հունվարի 2021թ.

«Ջրային կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Արազեն հայ-գերմանական ՀՁ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սանթրոսյանի (ենթակապալի կողմեր՝ ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ ՍՊԸ տվյալներ հացե՝ ք. Երևան Մոլդովական փ. 27շ., 78 բն, ՀՎՀՀ 01019617՝ Հ/Հ 19300650372900, ԷԴԻՖԻՍ ՍՊԸ տվյալներ հասցե՝ ք. Երևան Հալաբյան փ. 31շ, 18բն. Հ/Հ 118001010172, ՀՎՀՀ 00053285), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շինարարական աշխատանքները հիդրոմեխանիկական կառույցների համար՝ ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրում.

- Շենիկ ՋՕԸ-ի, Տավուշ ՋՕԸ-ի, Շիրակ ՋՕԸ-ի սպասարկման տարածքներում (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 12 շաբաթ (համաձայն նախագծային փաստաթղթերի):

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 70 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 454 639 656 (չորս հարյուր հիսունչորս միլիոն վեց հարյուր երեսունիննը հազար վեց հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ, որից 75 773 276 (յոթանասունհինգ միլիոն յոթ հարյուր յոթանասուներեք հազար երկու հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 106 905 465 (մեկ հարյուր վեց միլիոն ինը հարյուր հինգ հազար չորս հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ, որից 17 817 578 (տասնյոթ միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

4-րդ չափաբաժին 131 767 949 (մեկ հարյուր երեսունմեկ միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր քառասունիննը) ՀՀ դրամ, որից 21 961 325 (քսանմեկ միլիոն ինը հարյուր վաթսունմեկ հազար երեք հարյուր քսանհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

6-րդ չափաբաժին 215 966 242 (երկու հարյուր տասնհինգ միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ, որից 35 994 373.6 (երեսունհինգ միլիոն ինը հարյուր իննսունչորս հազար երեք հարյուր յոթանասուներեք դրամ 6 լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 68 195 900 (վաթսունութ միլիոն մեկ հարյուր իննսունհինգ հազար ինը հարյուր) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 23 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 2.1, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ջրային կոմիտե	Արազեն հայ-գերմանական ՀՁ ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	ք. Երևան, Դավթաշեն 4թ.
Հ/Հ 900011034262	հեռ. 010365092, 010365792, 091406301
ՀՎՀՀ 02555816	Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Կոմիտեի գլխավոր քարտուղարի	Հ/Հ 1150019189589537
պարտականությունները	ՀՎՀՀ 01228289
ժամանակավոր կատարող	տնօրեն
Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ	----------Ա. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ. Տ.	Կ.Տ

«18» հոկտեմբեր 2021թ. Հավելված թիվ 1
կնքված ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/3-Ա-1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ»
ՇԵՆԻԿ ՋՕԲ-Ի ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը
1	3	4	5	6	7
	Հողային աշխատանքներ				
1	Փոսորակի հանույթ V կարգի գրունտներում	մ³	299.6	1100	329,505
2	Փոսորակի հանույթ VI կարգի գրունտներում	մ³	299.6	1000	299,550
3	Փոսորակի հանույթ III կարգի գրունտներում	մ³	199.7	600	119,820
4	Փոսորակի հանույթ IV կարգի գրունտներում	մ³	199.7	750	149,775
5	Փոսորակի մշակում փափուկ բնահողերում ձեռքով	մ³	56.0	2000	112,000
6	Հետլիցք տեղի մշակված բնահողերից	մ³	745.4	100	74,540
7	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում	մ³	35.2	100	3,520
8	Ավելցուկային բնահողերի բարձում և տեղափոխում մինչև 3կմ	մ³	274.0	400	109,600
9	Ավազակոպճային նախաշերտ խտացումով, h=10սմ	մ³	38.7	7000	270,900
	Ընդամենը				1,469,210
	Ապամոնտաժման աշխատանքներ				
1	Քայքայված բետոնի քանում ձեռքով բարձում ինքնաթափի վրա և տեղափոխում մինչև 3կմ	մ³	48.5	9500	460,750
	Ընդամենը				460,750
	Բետոն, երկաթբետոն, հավաքովի ե/բ, ամրան				
1	Բետոնե հատակ B15, F150, W6	մ³	23.90	70000	1,673,000
2	Պատերի միաձույլ բետոն B15, F150, W6	մ³	64.40	78000	5,023,200

3	Բետոնի նախապատ. շերտի իրականացում B7,5	մ³	24.50	30000	735,000
4	Ցեմենտավազային շաղախ իրականացում	մ²	239.60	2000	479,200
5	Ամրան AIII	կգ	446.0	1000	446,000
6	Вр-I Ф4, ք.150x150մմ ամրաանյին ցանցի տեղադրում	մ²	105.8	900	95,226
	Ընդամենը				8,451,626
	Սարքեր և սարքավորումներ				
1	Ջրաչափական քանոն	հատ	127	12000	1,524,000
2	Ավտոմատ մակարդակաչափ	հատ	127	400000	50,800,000
3	Ավտոմատ հոսքաչափ DN≤400մմ	հատ	1	600000	600,000
	Ընդամենը				52,924,000
	Մետաղական տարրեր				
1	Թերթապողպատ 4մմ	կգ	21126.3	530	11,196,939
2	Պողպատ անկյունային 50x50x5մմ-3,77կգ/մ-3778,2կգ	մ	1002.2	1800	1,803,960
3	Պողպատե (St) DN820x8, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	4.6	140000	644,000
4	Պողպատե (St) DN530x7, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	95.1	69000	6,561,900
5	Պողպատե (St) DN2195x4,5, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	31.6	16000	505,600
6	Պողպատե (St) DN102x3, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	83.0	4000	332,000
	Ընդամենը				21,044,399
	Մեկուսացման աշխատանքներ				
1	Պողպատե խողովակների և ձևավոր մասերի երկշերտ յուղաներկում	մ²	878.0	1200	1,053,600
2	Մետաղական տարրերի նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացում	մ²	369.3	1300	480,090
3	Բետոնի արտաքին մակերևույթի երկշերտ հիդրոմեկուսացում բիտումապոլիմերային մաստիկով	մ²	252.0	1000	252,000
	Ընդամենը				1,785,690
	Մաքրման աշխատանքներ				
1	Մետաղական տարրերի և խողովակների մաքրում ժանգից և աղտոտվածությունից	մ²	15.3	1400	21,420

2	Կառուցվածքների մաքրում բուսականությունից, քարերից և ջրաբերուկներից, ձեռքով բարձելով ա/մ և տեղափոխելով 3կմ	մ³	90.0	1600	144,000
	Ընդամենը				165,420
	Շինարարական և այլ աշխատանքներ				
1	Փ 100մմ անցքի բացում 20-50սմ բետոնե պատի վրա	տեղ	37	4000	148,000
2	Փ 100մմ անցքի բացում 10-25սմ ե/բետոնե պատի վրա	տեղ	11	4000	44,000
	Ընդամենը				192,000
	Ընդամենը				86,493,095
	Ընդամենը տոկոսներով				**100**
	Այդ թվում սարքավորումներ				**52924000**
	Չնախատեսված ծախսեր-3%				**2,594,792.8**
	Ընդամենը				**89,087,888**
	ԱԱՀ - 20%				17,817,578
	Ընդամենը ԱԱՀ-ով				**106,905,465**

«ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ»
ՏԱՎՈՒՇ ՋՕԸ -Ի ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը
1	3	4	5	6	7
	Հողային աշխատանքներ				
1	Փոսորակի հանույթ V կարգի գրունտներում	մ³	360.8	1000	360,750
2	Փոսորակի հանույթ VI կարգի գրունտներում	մ³	360.8	1100	396,825
3	Փոսորակի հանույթ III կարգի գրունտներում	մ³	240.5	600	144,300
4	Փոսորակի հանույթ IV կարգի գրունտներում	մ³	240.5	750	180,375
5	Փոսորակի մշակում փափուկ բնահողերում ձեռքով	մ³	91.2	2000	182,400
6	Հետլիցք տեղի մշակված բնահողերից	մ³	806.4	50	40,320
7	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում	մ³	17.6	50	880
8	Ավելցուկային բնահողերի բարձում և տեղափոխում մինչև 3կմ	մ³	469.7	550	258,335

9	Ավազակոպճային նախաշերտ խտացումով, h=10սմ	մ³	63.1	7000	441,700
	Ընդամենը				2,005,885
	Ընդամենը կշիռը				1.88
	Ապամոնտաժման աշխատանքներ				
1	Քայքայված բետոնի քանում ձեռքով բարձում ինքնաթափի վրա և տեղափոխում մինչև 3կմ	մ³	101.5	9500	964,250
	Ընդամենը				964,250
	Բետոն, երկաթբետոն, հավաքովի ե/բ, ամրան				
1	Բետոնե հատակ B15, F150, W6	մ³	54.50	70000	3,815,000
2	Պատերի միաձույլ բետոն B15, F150, W6	մ³	147.70	86000	12702200
3	Բետոնի նախապատ. շերտի իրականացում B7,5	մ³	40.30	35000	1410500
4	Ցեմենտավազային շաղախ իրականացում	մ²	19.60	2000	39200
5	Ամրան AI	կգ	541.1	1100	595210
6	Вр-I Ф4, ք.150x150մմ ամրաանային ցանցի տեղադրում	մ²	291.0	1000	290968
	Ընդամենը				18,853,078
	Սարքեր և սարքավորումներ				
1	Ջրաչափական քանոն	հատ	104	12000	1248000
2	Ավտոմատ մակարդակաչափ	հատ	104	450000	46800000
3	Ավտոմատ հոսքաչափ DN≤400մմ	հատ	1	500000	500000
4	Ավտոմատ հոսքաչափ DN≥400մմ	հատ	6	700000	4200000
	Ընդամենը				52,748,000
	Մետաղական փարրեր				
1	Թերթապողպատ 4մմ	կգ	28449.1	600	17069460
2	Պողպատ անկյունային 50x50x5մմ-3,77կգ/մ-4444,4կգ	մ	1179.0	2050	2416950
3	Պողպատե (St) DN530x7, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	104.1	77000	8015700
4	Պողպատե (St) DN2195x4,5, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	25.0	16000	400000
5	Պողպատե (St) DN102x3, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	85.8	4800	411840
	Ընդամենը				28,313,950
	Մեկուսացման աշխատանքներ				

1	Պողպատե խողովակների և ձևավոր մասերի երկշերտ յուղաներկում	մ²	1545.9	1300	2009670
2	Մետաղական տարրերի նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացում	մ²	527.3	1400	738220
3	Բետոնի արտաքին մակերևույթի երկշերտ հիդրոմեկուսացում բիտումապոլիմերային մաստիկով	մ²	441.4	1000	441400
	Ընդամենը				3,189,290
	Մաքրման աշխատանքներ				
1	Մետաղական տարրերի և խողովակների մաքրում ժանգից և աղտոտվածությունից	մ²	223.5	1200	268200
2	Կառուցվածքների մաքրում բուսականությունից, քարերից և ջրաբերուկներից, ձեռքով բարձելով ա/մ և տեղափոխելով 3կմ	մ³	76.7	1600	122720
	Ընդամենը				390,920
	Շինարարական և այլ աշխատանքներ				
1	Փ 100մմ անցքի բացում 20-50սմ բետոնե պատի վրա	տեղ	22	4500	99000
2	Փ 100մմ անցքի բացում 10-25սմ ե/բետոնե պատի վրա	տեղ	11	4000	44000
	Ընդամենը				143,000
	Ընդամենը				**106,608,373**
	Ընդամենը տոկոսներով				**100.0**
	Այդ թվում սարքավորումներ				**52748000**
	Չնախատեսված ծախսեր-3%				**3,198,251.2**
	Ընդամենը				**109,806,624**
	ԱԱՀ - 20%				21,961,325
	Ընդամենը ԱԱՀ-ով				**131,767,949**

«ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ»
ՇԻՐԱԿ ՋՕԸ -Ի ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը
1	3	4	5	6	7
	Հողային աշխատանքներ				
1	Փոսորակի հանույթ V կարգի գրունտներում	մ³	672.2	1000	672150
2	Փոսորակի հանույթ VI կարգի գրունտներում	մ³	672.2	1100	739365

3	Փոսորակի հանույթ III կարգի գրունտներում	մ³	448.4	500	224175
4	Փոսորակի հանույթ IV կարգի գրունտներում	մ³	448.4	600	269010
5	Փոսորակի մշակում փափուկ բնահողերում ձեռքով	մ³	207.7	1900	394630
6	Հետլիցք տեղի մշակված բնահողերից	մ³	1490.1	90	134109
7	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում	մ³	96.7	90	8703
8	Ավելցուկային բնահողերի բարձում և տեղափոխում մինչև 3կմ	մ³	861.9	400	344760
9	Ավազակոպճային նախաշերտ խտացումով, h=10սմ	մ³	101.0	7000	707000
	Ընդամենը				3,493,902
	Ապամոնտաժման աշխատանքներ				
1	Քայքայված բետոնի քանում ձեռքով բարձում ինքնաթափի վրա և տեղափոխում մինչև 3կմ	մ³	95.1	8900	846390
	Ընդամենը				846,390
	Բետոն, երկաթբետոն, հավաքովի ե/բ, ամրան				
1	Բետոնե հատակ B15, F150, W6	մ³	119.80	70000	8386000
2	Պատերի միաձույլ բետոն B15, F150, W6	մ³	233.20	78000	18189600
3	Բետոնի նախապատ. շերտի իրականացում B7,5	մ³	68.90	30000	2067000
4	Ցեմենտավազային շաղախ իրականացում	մ²	199.90	1800	359820
5	Ամրան AIII	կգ	625.8	1000	625800
6	Ամրան AI	կգ	404.7	1000	404700
7	Bp-I Φ4, ք.150x150մմ ամրաանային ցանցի տեղադրում	մ²	1701.9	900	1531742
8	Ե/բ հորի տեղադրում D=1,5մ, H=1,8մ	կոմպ	4	36000	144000
	Ընդամենը				31,708,662
	Սարքեր և սարքավորումներ				
1	Ջրաչափական քանոն	հատ	236	10000	2360000
2	Ավտոմատ մակարդակաչափ	հատ	236	380000	89680000
3	Ավտոմատ հոսքաչափ DN≤400մմ	հատ	4	400000	1600000
4	Ավտոմատ հոսքաչափ DN≥400մմ	հատ	10	600000	6000000
	Ընդամենը				99,640,000
	Ընդամենը կշիռը				57.03
	Մետաղական տարրեր				
1	Թերթապողպատ 4մմ	կգ	32722.3	550	17997265
2	Պողպատ անկյունային 50x50x5մմ-3,77կգ/մ-6064կգ	մ	1608.5	1500	2412750

3	Պողպատե (St) DN820x8, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	5.7	150000	855000
4	Պողպատե (St) DN530x7, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	159.5	58000	9251000
5	Պողպատե (St) DN2195x4,5, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	36.2	16000	579200
6	Պողպատե (St) DN102x3, էլ. եռակցվող խողովակների մոնտաժում, փորձարկումով	մ	140.7	4000	562800
	Ընդամենը				31,658,015
	Մեկուսացման աշխատանքներ				
1	Պողպատե խողովակների և ձևավոր մասերի երկշերտ յուղաներկում	մ²	3319.3	1100	3651230
2	Մետաղական տարրերի նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացում	մ²	709.0	1350	957150
3	Բետոնի արտաքին մակերևույթի երկշերտ հիդրոմեկուսացում բիտումապոլիմերային մաստիկով	մ²	935.5	1000	935500
	Ընդամենը				5,543,880
	Մաքրման աշխատանքներ				
1	Մետաղական տարրերի և խողովակների մաքրում ժանգից և աղտոտվածությունից	մ²	1182.1	1200	1418520
2	Կառուցվածքների մաքրում բուսականությունից, քարերից և ջրաբերուկներից, ձեռքով բարձելով ա/մ և տեղափոխելով 3կմ	մ³	213.4	1500	320100
	Ընդամենը				1,738,620
	Շինարարական և այլ աշխատանքներ				
1	Փ 100մմ անցքի բացում 20-50սմ բետոնե պատի վրա	տեղ	27	3500	94500
2	Փ 100մմ անցքի բացում 10-25սմ ե/բետոնե պատի վրա	տեղ	2	3000	6000
	Ընդամենը				100,500
	Ընդամենը				**174,729,969**
	Ընդամենը տոկոսներով				**100.0**
	Այդ թվում սարքավորումներ				**99640000**
	Չնախատեսված ծախսեր-3%				**5,241,899**
	Ընդամենը				**179,971,868**
	ԱԱՀ - 20%				35,994,373.6
	Ընդամենը ԱԱՀ-ով				**215,966,242**

Ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքներ
Աշխատանքի մանրամասն նկարագրությունը և պայմանները տրված են նախագծային փաստաթղթերում: Աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել ոռոգման շրջանից դուրս կամ հնարավորությամն դեպքում ոռոգման շրջանում չխոչնդոտելով ոռոգման գործընթացը: Միաժամանակ անհրաժեշտ է համագործակցել շահագործող կազմակերպության հետ և կազմել աշխատանքների իրականացման գրաֆիկ: Աշխատանքների իրականացման գրաֆիկը ներկայացնել պատվիրատուին:

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Արմավիրի, Տավուշի, Շիրակի մարզերում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011034262
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Արազեն հայ-գերմանական ՀՁ ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն 4թ.
հեռ. 010365092, 010365792, 091406301
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150019189589537
ՀՎՀՀ 01228289
տնօրեն

----------Ա. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

«28» հունվարի Հավելված թիվ 2
2021թ. կնքված
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/3-Ա-1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ»
ՏԱՎՈՒՇ ՋՕԸ-Ի ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը որ ուշ քան 15.12.2021թ.
1	Նախապատրաստական շրջան	ոռոգման շրջանից հետո՝ մեկնակը կտրվի պատվիրատուի հետ համաձայնեցման օրվանից	1,5 շաբաթ
2	Ջրաչափական հանգույցի մաքրում		2,5 շաբաթ
3	Մետաղական տարրերի մաքրում ժանգից		2,5 շաբաթ
4	Հողային աշխատանքներ		5,5 շաբաթ
5	Բետոնե, ե/բետոնե, հավաքովի ե/բ աշխատանքներ		5,0 շաբաթ
6	մետաղական տարրերի մոնտաժում		3,5 շաբաթ
7	Հարդարման աշխատանքներ և տրամաչափարկում		2,0 շաբաթ
ԸՆԴԱՄԵՆԸ կապալառուի առաջարկով և պատվիրատուի համաձայնությամբ համաձայն նախագծի կարող է փոփոխվել:			12 շաբաթ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011034262
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Արազեն հայ-գերմանական ՀՁ ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն 4թ.
հեռ. 010365092, 010365792, 091406301
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150019189589537
ՀՎՀՀ 01228289
տնօրեն

Ա. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

«18» հունվարի

Հավելված N 2.1
2021թ. կնքված
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/3-Ա-1 ծածկագրով պայմանագրի

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի երաշխիքային ժամկետներ

1. Կառուցվածքների երաշխիքային սպասարկման ժամկետներ

1) Մետաղական տարեր – 40 տարի:
2) Խողովակային սարքավորումներ – 25 տարի:
3) Հավաքովի երկաթբետոնե հորեր – 25տարի
4) Կառուցվող բետոնյա կառուցվածքներ – 25-30 տարի

Երաշխիքային ժամկետները իրատեսական են շահագործման կանոնները պահպանելու դեպքում:

2. Օբյեկտի շինարարական աշխատանքների իրականացնող կապալառու կազմակերպության նվազագույն երաշխիքային ժամկետներ

1) Մրցույթի հաղթող Կապալառու կազմակերպությունը 1 տարի երաշխիքային ժամկետում պարտավոր է վերացնել թերությունները իր կողմից իրականացված աշխատանքներում:

ՆԿԱՐԱԳԻՐ
սարքերի և սարքավորումների

Չափաբաժնի համար	անվանումը	Առաջարկվող սարքերի և սարքավորումների					
		ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը	երաշխիքային ժամկետները
1	ջրաչափական քանոն	Արազեն հայ-գերմանական ՀՁ ՍՊԸ	Հիդրոտեխնիկական քանոն	Г Т - Р	Արազեն հայ-գերմանական ՀՁ ՍՊԸ	Չափման տիրույթը՝ 0 – 100 մմ, Դիսկրետայնությունը՝ 1սմ	5 տարի
	ավտոմատ մակարդակաչափ	Չափումների ազգային ինստիտուտ ՓԲԸ	Սերտիֆիկատ N 1326 ՀՀ չափման միջոցների գրանցամատյան N AM 7682-18 Մակարդակաչափ – ծախսաչափեր հեղուկի ուլտրաձայնային՝ տվյալների առցանց փոխանցման հնարավորությամբ	ULTRA - GSM	Չափումների ազգային ինստիտուտ ՓԲԸ	Չափման տիրույթ՝ 2-250սմ , Սխալանք՝ ± 1մմ, Իմպուլսների հաճախականությունը՝ 40 ԿՀց, Արձակման կոնի բացվածքը՝ 3°: GSM փոխակերպիչ Թողարկվում է ըստ ԳOUS 25893-83 և ԳOUS 28725-90 և ֆիրմայի տեխնիկական փաստաթղթերի GSM առցանց փոխանցման հնարավորությամբ	2 տարի
	ավտոմատ հոսքաչափ	B-Meters	* Հեղուկի ծախսաչափեր, հոսքաչափեր	TAN	B-Meters	Ոռոգման համակարգերի համար նախատեսված հոսքաչափեր, հաշվիչներ՝ GSM առցանց փոխանցման հնարավորությամբ	2 տարի

						Չափման տիրույթը՝ DN ≤ 300 Սխալանքը՝ ± 2 %	
	ավտոմատ հոսքաչափ	G.Gioanola Srl	* Հեղուկի ծախսաչափեր, հոսքաչափեր	WT	G.Gioanola Srl	Ոռոգման համակարգերի համար նախատեսված հոսքաչափեր, հաշվիչներ՝ GSM առցանց փոխանցման հնարավորությամբ Չափման տիրույթը՝ DN ≤ 300 Սխալանքը՝ ± 2 %	2 տարի
	ավտոմատ հոսքաչափ	Krohne	* Հեղուկի ծախսաչափեր, հոսքաչափեր	DWM 2000/L	Krohne	Ոռոգման համակարգերի համար նախատեսված հոսքաչափեր, հաշվիչներ՝ GSM առցանց փոխանցման հնարավորությամբ Չափման տիրույթը՝ DN 400 - 1600 Սխալանքը՝ ± 5 %	2 տարի
	ավտոմատ հոսքաչափ	Gentos	* Հեղուկի ծախսաչափեր, հոսքաչափեր	Pflow-D118, Pflow – D116	Gentos	Ոռոգման համակարգերի համար նախատեսված հոսքաչափեր, հաշվիչներ՝ GSM առցանց փոխանցման հնարավորությամբ Չափման տիրույթը՝ DN 50 - 1200 Սխալանքը՝ ± 5 %	2 տարի
	ավտոմատ հոսքաչափ	Չափումներ ի ազգային ինստիտուտ	* Հեղուկի ծախսաչափեր, հոսքաչափեր	ULTRA flow - GSM	Չափումներ ի ազգային ինստիտուտ	Ոռոգման համակարգերի համար նախատեսված հոսքաչափեր, հաշվիչներ՝ GSM առցանց փոխանցման հնարավորությամբ Չափման տիրույթը՝ DN 400 - 1600 Սխալանքը՝ ± 2 %	2 տարի
4	ջրաչափական քանոն	Արազեն հայ-գերմանական ՀՁ ՍՊԸ	Հիդրոտեխնիկական քանոն	Г Т - Р	Արազեն հայ-գերմանական ՀՁ ՍՊԸ	Չափման տիրույթը՝ 0 – 100 մմ, Դիսկրետայնությունը՝ 1սմ	5 տարի
	ավտոմատ մակարդակաչափ	Չափումներ ի ազգային ինստիտուտ ՓԲԸ	Սերտիֆիկատ N 1326 ՀՀ չափման միջոցների գրանցամատյան N AM 7682-18 Մակարդակաչափ – ծախսաչափեր հեղուկի ուլտրաձայնային՝ տվյալների առցանց փոխանցման հնարավորությամբ	ULTRA - GSM	Չափումներ ի ազգային ինստիտուտ ՓԲԸ	Չափման տիրույթ՝ 2-250սմ , Սխալանք՝ ± 1մմ, Իմպուլսների հաճախականությունը՝ 40 ԿՀց, Արձակման կոնի բացվածքը՝ 3°: GSM փոխակերպիչ Թողարկվում է ըստ ԳՕՍ 25893-83 և ԳՕՍ 28725-90 և ֆիրմայի տեխնիկական փաստաթղթերի GSM առցանց	2 տարի

						փոխանցման հնարավորությամբ	
	ավտոմատ հոսքաչափ	B-Meters	* Հեղուկի ծախսաչափեր, հոսքաչափեր	TAN	B-Meters	Ոռոգման համակարգերի համար նախատեսված հոսքաչափեր, հաշվիչներ՝ GSM առցանց փոխանցման հնարավորությամբ Չափման տիրույթը՝ DN ≤ 300 Սխալանքը՝ ± 2 %	2 տարի
	ավտոմատ հոսքաչափ	G.Gioanola Srl	* Հեղուկի ծախսաչափեր, հոսքաչափեր	WT	G.Gioanola Srl	Ոռոգման համակարգերի համար նախատեսված հոսքաչափեր, հաշվիչներ՝ GSM առցանց փոխանցման հնարավորությամբ Չափման տիրույթը՝ DN ≤ 300 Սխալանքը՝ ± 2 %	2 տարի
	ավտոմատ հոսքաչափ	Krohne	* Հեղուկի ծախսաչափեր, հոսքաչափեր	DWM 2000/L	Krohne	Ոռոգման համակարգերի համար նախատեսված հոսքաչափեր, հաշվիչներ՝ GSM առցանց փոխանցման հնարավորությամբ Չափման տիրույթը՝ DN 400 - 1600 Սխալանքը՝ ± 5 %	2 տարի
	ավտոմատ հոսքաչափ	Gentos	* Հեղուկի ծախսաչափեր, հոսքաչափեր	Pflow-D118, Pflow – D116	Gentos	Ոռոգման համակարգերի համար նախատեսված հոսքաչափեր, հաշվիչներ՝ GSM առցանց փոխանցման հնարավորությամբ Չափման տիրույթը՝ DN 50 - 1200 Սխալանքը՝ ± 5 %	2 տարի
	ավտոմատ հոսքաչափ	Չափումներ ի ազգային ինստիտուտ	* Հեղուկի ծախսաչափեր, հոսքաչափեր	ULTRA flow - GSM	Չափումներ ի ազգային ինստիտուտ	Ոռոգման համակարգերի համար նախատեսված հոսքաչափեր, հաշվիչներ՝ GSM առցանց փոխանցման հնարավորությամբ Չափման տիրույթը՝ DN 400 - 1600 Սխալանքը՝ ± 2 %	2 տարի
6	ջրաչափական քանոն	Արազեն հայ-գերմանական ՀՁ ՍՊԸ	Հիդրոտեխնիկական քանոն	Г Т - Р	Արազեն հայ-գերմանական ՀՁ ՍՊԸ	Չափման տիրույթը՝ 0 – 100 մմ, Դիսկրետայնությունը՝ 1սմ	5 տարի
		Չափումներ ի ազգային ինստիտուտ	Սերտիֆիկատ N 1326 ՀՀ չափման միջոցների	ULTRA - GSM	Չափումներ ի ազգային ինստիտուտ	Չափման տիրույթ՝ 2-250սմ , Սխալանք՝ ± 1մմ,	2 տարի

	ավտոմատ մակարդակաչափ	ՓԲԸ	գրանցամատյան N AM 7682-18 Մակարդակաչափ – ծախսաչափեր հեղուկի ուլտրաձայնային՝ տվյալների առցանց փոխանցման հնարավորությամբ		ՓԲԸ	Իմպուլսների հաճախականությունը՝ 40 ԿՀց, Արձակման կոնի բացվածքը՝ 3°: GSM փոխակերպիչ Թողարկվում է ըստ ԳՕՍ 25893-83 և ԳՕՍ 28725-90 և ֆիրմայի տեխնիկական փաստաթղթերի GSM առցանց փոխանցման հնարավորությամբ	
	ավտոմատ հոսքաչափ	B-Meters	* Հեղուկի ծախսաչափեր, հոսքաչափեր	TAN	B-Meters	Ոռոգման համակարգերի համար նախատեսված հոսքաչափեր, հաշվիչներ՝ GSM առցանց փոխանցման հնարավորությամբ Չափման տիրույթը՝ DN ≤ 300 Սխալանքը՝ ± 2 %	2 տարի
	ավտոմատ հոսքաչափ	G.Gioanola Srl	* Հեղուկի ծախսաչափեր, հոսքաչափեր	WT	G.Gioanola Srl	Ոռոգման համակարգերի համար նախատեսված հոսքաչափեր, հաշվիչներ՝ GSM առցանց փոխանցման հնարավորությամբ Չափման տիրույթը՝ DN ≤ 300 Սխալանքը՝ ± 2 %	2 տարի
	ավտոմատ հոսքաչափ	Krohne	* Հեղուկի ծախսաչափեր, հոսքաչափեր	DWM 2000/L	Krohne	Ոռոգման համակարգերի համար նախատեսված հոսքաչափեր, հաշվիչներ՝ GSM առցանց փոխանցման հնարավորությամբ Չափման տիրույթը՝ DN 400 - 1600 Սխալանքը՝ ± 5 %	2 տարի
	ավտոմատ հոսքաչափ	Gentos	* Հեղուկի ծախսաչափեր, հոսքաչափեր	Pflow-D118, Pflow – D116	Gentos	Ոռոգման համակարգերի համար նախատեսված հոսքաչափեր, հաշվիչներ՝ GSM առցանց փոխանցման հնարավորությամբ Չափման տիրույթը՝ DN 50 - 1200 Սխալանքը՝ ± 5 %	2 տարի
	ավտոմատ հոսքաչափ	Չափումների ազգային ինստիտուտ	* Հեղուկի ծախսաչափեր, հոսքաչափեր	ULTRA flow - GSM	Չափումների ազգային ինստիտուտ	Ոռոգման համակարգերի համար նախատեսված հոսքաչափեր, հաշվիչներ՝ GSM առցանց փոխանցման հնարավորությամբ	2 տարի

						Չափման տիրույթը՝ DN 400 - 1600 Սխալանքը՝ ± 2 %	

* Տարբեր տիպի ավտոմատ հոսքաչափերը կնտրվեն և կտեղադրվեն կախված տեղանքից, հիդրոտեխնիկական կառուցվածքի տիպից, ջրաչափական դիտակետերի տեխնիկական պարամետրերից ինչպես նաև ջրի տարբեր քանակների առկայությունից և խողովակաշարերում առկա ջրի ճնշումներից:

Սարքավորումները պետք է լինեն սերտիֆիկացված և ՀՀ տարածքում որպես կոմերցիոն հաշվառման նպատակով կիրառելի, ինչպես նաև պետք է ունենան ծրագրային ապահովում՝ միասնական համակարգին (սերվեր), տվյալների առցանց փոխանցման համար, տեղադրված լինեն մետաղական պաշտպանիչ արկղի մեջ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ900011034262
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Արազեն հայ-գերմանական ՀՁ ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն 4թ.
հեռ. 010365092, 010365792, 091406301
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150019189589537
ՀՎՀՀ 01228289
տնօրեն

----------Ա. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

«18» հունվարի

Հավելված N 3
2021թ. կնքված
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-21/3-Ա-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45241152/2	Շինարարական աշխատանքներ հիդրոմեխանիկական կառույցների համար	53 450 000	80 179 000	80 179 000	106 905 465	106 905 465	106 905 465	106 905 465
4	45241152/3	Շինարարական աշխատանքներ հիդրոմեխանիկական կառույցների համար	65 880 000	65 880 000	98 825 000	131 767 949	131 767 949	131 767 949	131 767 949
6	45241152/4	Շինարարական աշխատանքներ հիդրոմեխանիկական կառույցների համար	107 983 000	161 974 000	161 974 000	215 966 242	215 966 242	215 966 242	215 966 242

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011034262
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
ժամանակավոր կատարող

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Արազեն հայ-գերմանական ՀՁ ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն 4թ.
հեռ. 010365092, 010365792, 091406301
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1150019189589537
ՀՎՀՀ 01228289
տնօրեն

Ա. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

«18» հունվարի Հավելված թիվ 4
2021թ. կնքված
ՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/3-Ա-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

«18» հունիսի

Հավելված 4.1
2021թ. կնքված
ՁԿ-ԲՄԱՇՁԲ-21/3-Ա-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն